ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Մենք՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներս,

- ✓ կարեւորելով հանրության տեղեկացված լինելու իրավունքը եւ ընդգծելով տեղեկացնելու՝ ԶԼՄ-ների պարտականությունը,
- ✓ գիտակցելով մասնագիտական եւ բարոյական հնարավորինս բարձր չափանիշներին հետեւելու եւ դրանց շուրջ համախմբվելու անհրաժեշտությունը, միաժամանակ՝ չբացառելով լրագրողների՝ բարոյական ընտրության իրավունքը,
- ✓ ընդգծելով խմբագրական անկախության պաշտպանության եւ հանրային շահին հակասող որեւէ մասնավոր շահով լրագրողներին չկաշկանդելու անհրաժեշտությունը,
- ✓ ընդունելով, որ ԶԼՄ-ներն ու լրագրողները հաշվետու են իրենց լսարանի եւ միմյանց առջեւ,
- ✓ արձանագրելով, որ հնարավոր չէ բոլոր դեպքերի համար սահմանել միասնական կանոններ, սակայն կարելի է եւ հնարավոր է պահպանել պրոֆեսիոնալ լրագրության համընդհանուր չափանիշները,

ընդունում ենք հետեւյալ սկզբունքներն ու դրանցից բխող պարտավորությունները:

1. Ճշգրտություն եւ անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

Ինքնակարգավորման նախաձեռնություն. Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

1.1. Մինչեւ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ։

1.2. Հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը։

1.3. Պատասխանատու մոտեցում ցուցաբերել սոցցանցային կամ նոր մեդիա հարթակների տեղեկությունները տարածելիս, անպայման նշել դրանց ստուգված, վստահելի կամ հետագա ստուգման ենթակա լինելը։

1.4. Փաստերի եւ տեղեկությունների շարադրանքը հստակ սահմանազատել կարծիքներից, վերլուծություններից եւ մեկնաբանություններից,

1.5. Վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի եւ հավաստի տեղեկությունների վրա։

1.6. Զգտել, որ հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, վերնագրերը բխեն նյութի բովանդակությունից, չչարաշահվեն հանրային դեմքերի եւ սովորական մարդկանց անձնական տվյալների համընկնումները, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս։

1.7. Չաղավաղել լուսանկարային կամ տեսագրված նյութի բովանդակությունը, լուսանկարներում եւ տեսանյութերում տեխնիկական հնարքներ կիրառելու եւ միջամտությունների դեպքում անպայման նշել դա։

2. Ազնվություն տեղեկությունների աղբյուրների հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

2.1. Հնարավորինս նշել տեղեկությունների աղբյուրները։

2.2. Հնարավորինս խուսափել տեղեկատվության խորհրդապահական աղբյուրներ օգտագործելուց, լրատվության աղբյուրը գաղտնի պահելու խոստումից առաջ միշտ պարզել շարժառիթները, սակայն եթե տեղեկությունն այնուամենայնիվ տրվում է աղբյուրի գաղտնիության պայմանով, որեւէ պարագայում չբացահայտել այն։

2.3. Խուսափել տեղեկությունների ձեռքբերման ծածուկ եւ գաղտնի մեթոդներից, բացառությամբ այն դեպքերի, երբ ավանդական բաց մեթոդները չեն ապահովում

հասարակական շահերից բխող տեղեկությունների ստացումը: Այսպիսի մեթոդների կիրառման անհրաժեշտությունը պետք է ներկայացվի եւ հիմնավորվի բուն հրապարակման մեջ:

2.4. Հարգել հեղինակային իրավունքը, բացառել գրագողությունը, մեջբերումներ եւ արտատպություններ կատարելիս նշել աղբյուրները:

2.5. Չչարաշահել լրագրողների եւ լրատվամիջոցների հետ շփման փորձ չունեցող անձանց դյուրահավատությունը:

2.6. Հարգել հարցազրույց տվողի՝ որպես հարցազրույցի տեքստի նկատմամբ համահեղինակի, իրավունքները:

3. Խմբագրական անկախություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

3.1. Խմբագրությունում ստեղծվող բովանդակության համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման, նյութերի շարադրման, ինչպես նաեւ լուսանկարահանման, տեսաձայնագրման, մոնտաժման եւ պատրաստի նյութերի հրապարակման/հեռարձակման ընթացքում գործել ազատորեն: Այդ ազատությունը կարող է սահմանափակված լինել միայն օրենքներով:

3.2. Խմբագիրը հաշվի է առնում խմբագրական առաջադրանքը կատարելուց հրաժարվելու՝ լրագրողի հիմնավոր պատճառաբանությունը, եթե դա հակասում է լրագրողի անձնական սկզբունքներին կամ առաջացնում է շահերի բախում:

3.3. Տեղի չտալ հրապարակումների բովանդակությանը միջամտելու եւ լուսաբանման մոտեցումների վրա ազդելու նպատակով հանրային իշխանության մարմինների, հասարակական եւ առեւտրային կազմակերպությունների, տեղեկությունների աղբյուրների, հանրային կապերի (PR) ծառայությունների կամ անհատների կողմից միջամտությանը կամ ճնշումներին: Իրավիճակը հանրայնացնել եւ դիմել մասնագիտական հանրության աջակցությանն այն դեպքում, եթե ներխմբագրական կանոնակարգումները բավարար չեն դրանց դիմակայելու համար եւ (կամ) առկա է հանրային շահի գերակայության հետ բախման խնդիր:

3.4. Սահմանել սոցիալական ցանցերում խմբագրության աշխատակիցների վարքի կանոնները եւ հետեւել դրանց պահպանմանը: Մասնավորապես, այդ կանոնները պետք է ներառեն առնվազն հետեւյալը.

3.4.1. Սոցիալական ցանցերում չտարածել հայտարարություն կամ կատարել գրառումներ, որոնք կարող են ընկալվել որպես ռասայական, սեռական, կրոնական, քաղաքական հայացքների կամ այլ հիմքով խտրականության դրսեւորում: Սա վերաբերում է նաեւ տեղադրվող լուսանկարին եւ տեսանյութին:

3.4.2. Եթե սոցիալական ցանցում կատարված որեւէ գրառում կարող է կասկածի տակ դնել մասնագիտական օբյեկտիվությունն ու բարեխղճությունը, ապա ավելի լավ է ձեռնպահ մնալ այն հրապարակելուց:

3.4.3. Եթե լրագրողը լուսաբանում է որեւէ ոլորտ, ապա չպետք է անդամակցի հանրային որեւէ նախաձեռնության կամ խմբի, որը պաշտպանում է այդ ոլորտում եղած հատուկ շահերը: Խմբերին անդամակցումը կարող է հետապնդել միայն անցուդարձին տեղյակ լինելու նպատակ:

3.4.4. Միշտ պետք է հիշել, որ սոցցանցային ակցիաներին մասնակցելը եւս կարող է շահերի բախում առաջացնել:

3.4.5. Սոցիալական ցանցում գործածել անձը նույնականացնող տվյալներ:

3.4.6. Մոդերացնել լրատվամիջոցի սոցցանցային էջերի մեկնաբանությունների հրապարակումը՝ հնարավորինս հեռացնելով ատելության խոսք, բռնություն եւ օրենքով արգելված այլ գործողություններ քարոզող, ակնհայտ վիրավորանք պարունակող գրառումները:

3.4.7. Եթե լրատվամիջոցը մեկնաբանություններում չի նկատել ատելության խոսք, բռնության կոչ կամ ակնհայտ վիրավորանք պարունակող գրությունները, սակայն անձը, որի հասցեին եղել են դրանք, այդ մասին ծանուցել է խմբագրությանը, ապա ծանուցումից հետո ողջամիտ ժամկետում հեռացնել կամ փակել նման մեկնաբանությունները:

4. Հարգանք մարդկանց անձնական կյանքի եւ այլ իրավունքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

4.1. Պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական եւ ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության եւ նամակագրության նկատմամբ: Միայն հասարակական շահի առկայությամբ կամ պաշտպանության անհրաժեշտությամբ կարող է արդարացվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հրապարակումը:

4.2. Երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, եւ պատասխանատվություն է կրում իր վճռի համար։

4.3. Առանձնապես նրբանկատ լինել, երբ տեղեկության աղբյուրները կամ հրապարակումների հերոսները երեխաներ, անչափահասներ են։ Զգույշ լինել դեռահաս մեղադրյալների, ամբաստանյալների, դատապարտյալների, սեռական հանցագործությունների զոհերի ինքնությունը բացահայտելիս։

4.4. Երեխաներին վերաբերող կամ նրանց մասնակցությամբ նյութեր պատրաստելիս առաջնորդվել ՅՈՒՆԻՍԵՖ-ի մեդիա խմբի մշակած՝ «Երեխաների մասին նյութեր պատրաստելու լրագրողական էթիկան» փաստաթղթով։

4.5. Երեխայից հարցազրույց վերցնելուց, տեսանկարահանելուց, լուսանկարը կամ նրան վերաբերող փաստական նյութեր հրապարակելուց առաջ ստանալ երեխայի եւ նրա համար պատասխանատու անձի համաձայնությունը, ցանկալի է՝ գրավոր եւ անպայման երեխային հասկանալի լեզվով։ Համաձայնությունը պետք է լինի ինքնակամ, եւ բացառվի պարտադրանքի որեւէ ձեւ։ Երեխան եւ նրա համար պատասխանատու անձը պետք է պարզորոշ հասկանան, որ իրենք խոսում են լրագրողի հետ, որը մտադիր է տվյալ նյութը տարածել լրատվամիջոցով։ Զգտել, որ հարցազրույցի ընթացքում երեխային հոգեկան ցավ չպատճառվի, չստիպել նրան՝ վերապրել իր կրած տառապանքներն ու ցավը, կորուստները եւ իր կյանքի այլ ծանր պահերը, ասել կամ անել բաներ, որոնք հարկավոր են միայն տպավորիչ պատկեր ստանալու կամ ազդեցիկ ռեպորտաժ պատրաստելու համար։

4.6. Առողջական լուրջ խնդիրներ ունեցող, ինքնասպանություն գործած կամ այդպիսի փորձ կատարած անձանց, ողբերգություն կամ վիշտ տարած մարդկանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա- կամ ձայնանյութ հեռարձակելիս նրբանկատ լինել նրանց նկատմամբ։

4.7. Պահպանել անմեղության կանխավարկածը. հանցագործության մեջ կասկածվողների անունները մինչեւ դատաքննությունը հրապարակելիս քննարկել դրա հասարակական անհրաժեշտությունը՝ հավասարակշռություն պահպանելով անմեղության կանխավարկածի, հանցագործության մեջ կասկածվողների՝ արդար դատաքննության իրավունքի եւ հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքի միջեւ։

5. Հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների եւ համամարդկային արժեքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

5.1. Խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով:

5.2. Որեւէ ձեւով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական եւ լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը:

5.3. Որեւէ ձեւով չքարոզել պոռնոգրաֆիա, բռնություն, պատերազմ, չժխտել ցեղասպանությունները եւ մարդկության դեմ հանցագործությունները:

5.4. Զգույշ լինել ահաբեկչական գործողությունների վերաբերյալ տեղեկություններ տարածելիս, բացառել ահաբեկիչների նկատմամբ համակրանք առաջացնող սյուժեները եւ հաղորդագրությունները, նրբանկատ լինել իրադարձությունների ականատեսների՝ որպես տեղեկության աղբյուրների նկատմամբ, խուսափել պատանդների եւ հնարավոր զոհերի հարազատների եւ ընկերների բացահայտումից՝ առանց իրենց համաձայնության:

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

6.1. Աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից:

6.2. Պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, եւ պատասխանի հնարավորություն ընձեռել բոլոր նրանց, որոնց հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում:

6.3. Ընդունել սեփական սխալները եւ պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք:

6.4. Քաջալերել հանրությանը՝ արտահայտելու ԶԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության:

6.5. Գեներատիվ արհեստական բանականության (ԱԲ) գործիքների կիրառմամբ բովանդակություն ստեղծելիս հստակ մակնշել ԱԲ մոդելները՝ ներկայացնելով դրանցում կիրառվող ալգորիթմների բնույթը եւ դրանց հնարավոր թերությունները:

6.6. Վերստուգել վերջնական մեդիա բովանդակությունը եւ նախքան հրապարակումը շտկել ԱԲ կիրառման հետեւանքով առաջացած սխալները կամ էթիկական խախտումները:

6.7. Արհեստական բանականության գործիքներն օգտագործելիս բացառել անանուն աղբյուրների եւ անձնական տվյալներին վերաբերող զգայուն տեղեկատվության բացահայտումը:

6.8. Հնարավորինս հետեւել ԱԲ ոլորտում էթիկական կարգավորումների միջազգային փորձին ու ի հայտ եկող նորություններին եւ դրանք կիրառել մեդիա բովանդակություն ստեղծելիս:

7. Ազնվություն ընտրությունները եւ հանրաքվեները լուսաբանելիս

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

7.1. Բոլոր կուսակցությունների եւ թեկնածուների նկատմամբ լինել հանդուրժող:

7.2. Չվիրավորել թեկնածուների անձը, չծաղրել նրանց հայացքներն ու տեսակետները:

7.3. Չհրապարակել թեկնածուների հասցեին զրպարտություն, շանտաժ ու սպառնալիք պարունակող նյութեր:

7.4. Բոլոր թեկնածուներին իրենց ծրագրերը եւ տեսակետները ներկայացնելու համար լրատվամիջոցում հավասար հնարավորություն տալ, վճարովի տեղ կամ եթերաժամ հատկացնելիս՝ լրատվամիջոցում ապահովել հավասար սակագնային պայմաններ:

7.5. Չհրապարակել քողարկված քաղաքական գովազդ պարունակող նյութեր: Այս կամ այն կուսակցությանը կամ թեկնածուին աջակցող խմբերի կողմից հրապարակման ներկայացված (վճարովի կամ անվճար) կամ նրանց պատվերով պատրաստված նյութերը հստակ առանձնացնել այլ նյութերից կամ այդ մասին նշում կատարել:

7.6. Հեռարձակվող լրատվամիջոցները պետք է ձեռնպահ մնան որեւէ կոնկրետ թեկնածուի կամ կուսակցության աջակցելուց, տպագիր եւ առցանց լրատվամիջոցները նման մտադրություն ունենալու դեպքում այդ մասին նախապես եւ հստակ հայտարարեն:

Մենք՝ սույն Կանոնագիրը ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչներս, ընդունում ենք մեր իսկ ընտրած Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու մեր գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը սույն Կանոնագրի դրույթներին, եւ պատրաստակամություն ենք հայտնում Դիտորդ մարմնի եզրակացության՝ խախտմանը վերաբերող հատվածներն առանց մեկնաբանությունների

հրապարակել մեր լրատվամիջոցներում եւ այդ մասին տեղեկացնել ԴՄ-ին՝ կցելով հրապարակման հղումը:

Ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած ՁԼՄ-ների ղեկավարների եւ լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությանը:

Վերախմբագրված տարբերակը հաստատվել է Ինքնակարգավորման նախաձեռնության համաժողովում, 2024 թվականի մայիսի 18-ին: